ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

07 ԱՊՐԻԼԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:

Բացակա էին՝ Գուրգեն Մարտիրոսյանը, Ալիկ Մարտիրոսյանը, Մարիամ Համբարձումյանը, Արմեն Կոստանյանը, Էդգար Վարդանյանը, Նորայր Զախարյանը, Օհան Օհանյանը, Սամվել Զաքոյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ Մուրադ Մովսիսյանը, Գրիգոր Բոշյանը

Նիստը վարում էր Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Գրիգոր Դաշտոյանը

Նիստը արձանագրում էր Գավառի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Կարինե Մանուկյանը

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ առաջարկվում է.

1. Հաստատել Գավառ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրակարգը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 69-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը, 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ առաջարկվում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի արտահերթ նիստի թիվ 3-Ա որոշումը: 2. Ընդունել Գավառ համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 70-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 345-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՎ 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28) կետի դրույթներով

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի 2025 թվականի համար աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 10-ի N 345-Ա որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնում առաջատար մասնագետ տողի 4 հաստիքային միավորը փոխարինել 3 հաստիքային միավորով՝ կրճատելով առաջատար մասնագետի 1 հաստիքը /ծածկագիր 3.1-4/:
2. Առաջարկել Գավառ համայնքի ղեկավարին՝ համայնքային ծառայողների պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու նպատակով, սահմանված կարգով դիմել ՀՀ Կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:
3. Սույն որոշման 1-ին կետն ուժի մեջ է մտնում սույն թվականի հուլիսի 1-ից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 71-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, առաջարկվում է՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2-Ն որոշման 2, 3 և 6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲՐՍԻԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի և 245-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 12.04.2024թ. թիվ 107-Ա որոշմամբ հաստատված կարգով՝ առաջարկվում է.

1.Շարժական և անշարժ գույքերի գույքահարկերի գծով առաջացած տույժերը ըստ ներկայացված ցուցակների փոխհատուցել Գավառ համայնքի 2025 թվականի համայնքի բյուջեի միջոցների հաշվին, քանի որ ցուցակներում ընդգրկված անձինք համայնքի բյուջե վճարել են իրենց սեփականություն համարվող գույքերի հարկերը առանց տույժ-տուգանքների.

Ներկայացվում են ցուցակները ըստ բնակավայրերի.

1. Գավառ քաղաք

ա.հողի հարկի գծով տույժ՝	346 689 ՀՀ դրամ
բ.շենք-շինություններիգծով գույքահարկի տույժ՝	76 089 ՀՀդրամ
գ.փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝	22 909 ՀՀդրամ
դ.անշարժգույքիհարկիգծովտույժ՝	4 565 ՀՀ դրամ
Ընդամենը՝	450 252 ՀՀ դրամ

2.Նորափուսբնակավայր

ա.հողի հարկի գծով տույժ՝	20 037 ՀՀ դրամ
բ.շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝	21 627 ՀՀդրամ
գ.փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝	49374 ՀՀ դրամ
դ.անշարժ գույքի հարկի գծո վ տույժ՝	3682 ՀՀ դրամ
Ընդամենը՝	94720 ՀՀ դրամ

3. Լճափ բնակավայր

ա.հողի հարկի գծով տույժ՝	79 380 ՀՀ դրամ
Ընդամենը՝	79 380 ՀՀ դրամ

4.Կարմիրգյուղ բնակավայր

ա.հողի հարկի գծով տույժ՝	325 480 ՀՀդրամ
բ.շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝	14 850 ՀՀդրամ
գ. փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝	14 600 ՀՀ դրամ
Ընդամենը՝	354 930 ՀՀ դրամ

3.Սարուխան բնակավայր

ա.հողի հարկի գծով տույժ՝	113 418 ՀՀ դրամ
բ. շենք-շինությունների գծով գույքահարկի տույժ՝	1 462 ՀՀ դրամ
գ.փոխադրամիջոցների գծով գույքահարկի տույժ՝	26 398 ՀՀ դրամ
Ընդամենը՝	221 278 ՀՀ դրամ

Ըստ ներկայացված ցուցակների տույժերի գծով տալ արտոնություններ և արտոնությունների գումարը 1 200 560 /մեկ միլիոն երկու հարյուր հազար հինգ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ փոխհատուցել Գավառհամայնքի 2025 թվականի բյուջեովայդ նպատակով նախատեսված 1.6.1. (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) գործառնական դասակարգման 4823 (հարկեր և տուրքեր) տնտեսագիտական հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3. մասով՝ առաջարկվում է

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Կարմիրգյուղ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-056-0316-0609 կադաստրային ծածկագրով, 2,2487 հա մակերեսով հողատարածքում «ԱՄԱ» ՍՊԸ -ի կողմից երկրաբանահետախուզական ուսումնասիրություն կատարելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՆՁԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԾՐՈՒՆ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ)

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 21) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» 2010թ. հունվարի 14-ի N16-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ համայնքի Գանձակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, 05-021-0350-0003 կադաստրային ծածկագրով, պետական սեփականություն հանդիսացող, 4-րդ կարգի 9,95859 հա մակերեսով, օգտագործման սահմանափակումներ չունեցող գյուղատնտեսական նշանակության արոտավայրը գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով՝ մինչև 10 տարի օգտագործման ժամկետով մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն:
2. Դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ եզրակացություն ստանալու համար:
3. Վարձակալության տրամադրվող հողամասի մեկ հեկտարի համար տարեկան վարձավճարը սահմանել 2500 /երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ազատության 2-րդ փողոց 1/57 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0292-0034 կադաստրային ծածկագրով, 0,00419 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Հայկ Պարույրի Հակոբյանի կողմից կառուցված 41,90 քմ արտաքին (36,90 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 514,8 (հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 874 (ութ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ազատության 2-րդ փողոց 1/58 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0292-0033 կադաստրային ծածկագրով, 0,00575 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Հայկ Պարույրի Հակոբյանի կողմից կառուցված 57,50 քմ արտաքին (50,71 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառույցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 514,8 (հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 874 (ութ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ համայնք, գյուղ Գեղարքունիք Հ. Շիրազի փողոց 1/1 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-025-0037-0022 կադաստրային ծածկագրով, 0,00103 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Նարինե Ռաֆիկի Սարգսյանի կողմից կառուցված 10,3 քմ արտաքին (6,20 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառոյցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 514,8 (հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 874 (ութ հարյուր յոթանասունչորս) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաք, Ազատության փողոց, 2-րդ փակուղի 35 ավտոտնակ հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0294-0285 կադաստրային ծածկագրով, 0,00333 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը և Արտավազդ Սուրենի Օրդյանի կողմից կառուցված 33,30 քմ արտաքին (29,26 քմ ներքին) մակերեսով ավտոտնակը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու ինքնակամ կառոյցն իրականացրած անձին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 1221,00 (մեկ հազար երկու հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, իսկ ավտոտնակի 1 քմ-ի համար 1209 (մեկ հազար երկու հարյուր ինը) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների դրույթներով՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ ք. Գավառ, Գ. Միքայելյան փողոց (Արծվաքար թաղամաս) 95/1 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0607-0025 կադաստրային ծածկագրով, 0,08726 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության սահմանափակումներ չունեցող հողատարածքը՝ առևտրի և սպասարկման կետ կառուցելու նպատակով, աճուրդային կարգով օտարելուն:
2. 05-001-0607-0025 կադաստրային ծածկագրով 0,08726 հա մակերեսով հողատարածքի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը մեկ քառակուսի մետրի համար սահմանել 700 (յոթ հարյուր) ՀՀ դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 80-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՓՈՂՈՑ 14 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ԼՑԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, 16-րդ հոդվածի 3-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման 28-րդ կետը՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաք, Լևիկ Հարությունյան փողոց 14 հասցեում հեղուկ վառելիքի

լցակայանի կառուցմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 81-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՄԱՋՄԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ հողային օրենսգրքի 61-րդ և 66-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 35-րդ հոդվածների, ՀՀ Կառավարության 26.05.2016թ. «Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ընդլայնման նպատակով տրամադրման ենթակա հողամասը որպես առանձին գույքային միավոր աճուրդային կարգով օտարելու անհնարինության որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 550-Ն որոշման դրույթներով, ք. Գավառ Պետրրովի փողոց 2-րդ նրբանցք թիվ 34-36 հասցեի սեփականատեր Երվանդ Գուրգենի Մարտիրոսյանի /ծնված 05.09.1946թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրված դիմումը, ***առաջարկվում է.***

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Պետրովի փողոց 2-րդ նրաբնցք թիվ 36/1 հողամաս հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող 05-001-0367-0064 կադաստրային ծածկագրով 0,01195 հա մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու Ք. Գավառ Պետրովի փողոց 2-րդ նրբանցք թիվ 34-36 հասցեի սեփականատեր Երվանդ Գուրգենի Մարտիրոսյանին:
2. Վաճառքի գին սահմանել հողամասի 1 քմ-ի համար 792 (յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 82-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆՈՐ ՁԵՔԲԵՐՎԱԾ ԳՈՒՅՔԵՐԸ ԱՄԵՆԱՄՅԱ ՊԱՐՏԱԴԻՐ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻԼԻԹ ԲԱԲԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող նոր ձեքբերված գույքերը ներառել ամենամյա պարտադիր գույքագրման ցանկում /Հավելված 1/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 83-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔԸ ՀԱՂԹՈՂ ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻԼԻԹ ԲԱԲԻՆՅԱՆ)

Ղեկավարվելով Գավառ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 8 թիվ 44-Ա որոշումով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով. առաջարկվում է՝

1.Մասնակցային բյուջետավորման ծրագրի շրջանակներում հաղթող ծրագրի պատասխանատուին հանձնել ձեռք բերված ապրանքը /Հավելված 1/ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 84-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի , «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ

հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Դու մենակ չես» մարդասիրական հասարակական կազմակերպության թիվ 1006 գրությունը՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 01 բաժնի 6 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4819 տնտեսագիտական հոդվածով նախատեսված /ՀԿ –ներին տրամադրվող/ գումարից 270 000 / երկու հարյուր յոթանասուն հազար / ՀՀ դրամ տրամադրել «Դու մենակ չես» մարդասիրական հասարակական կազմակերպությանը՝ (ՀՀ, ք. Երևան, Արցախի պող. 10, բն. 11)՝ մանկական ուղեղային կաթված ախտորոշում ունեցող երեխաներին վերականգնողական ծառայություն մատուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 85-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի , «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Շախմատի ակադեմիայի կողմից տրամադրված Հայաստանի պատանիների և աղջիկների 2025 թ.առաջնության կիսաեզրափակիչ փուլին մասնակցող անդամների անվանացանկի ՝առաջարկվում է.

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 225 000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել Գավառ քաղաքի Միքայելյան փ. շ. 18 բն.8 հասցեի բնակիչ Կարո Արմենակի Սարգսյանին՝ Շախմատի ակադեմիայի կողմից կազմակերպված Հայաստանի պատանիների և աղջիկների 2025 թ.առաջնության կիսաեզրափակիչ փուլին մասնակցող թվով երկու մարզիչների և թվով հինգ մարզիկների կողմից կատարված ծախսերը հատուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 86-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի պաուերլիֆտինգի ֆեդերացիայի գրությունը՝ առաջարկվում է.

1.Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել Գավառ քաղաքի Նալբանդյան փ տ. 6 հասցեի բնակիչ Գևորգ Աշոտի Աֆրիկյանին Չեխիայի Հանրապետության Տրունտով քաղաքում մայիսի 14-ից 18-ը կայանալիք պաուերլիֆտինգի GPS վարկածով Եվրոպայի առաջնությանը մասնակցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 87-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով և սոցիալական աջակցության ծառայությունների տրամդրման հանձնաժողովի առ 28.03.2025 թ. եզրակացությունը՝ առաջարկվում է.

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել ԼՂ-ից բռնի տեղահանված Գավառ քաղաքի Գ. Միքայելյան 3 նրբ. փկղ տ.3 հասցեում բնակվող Շահամիր Պատիկոնի Հայրապետյանին՝ մոր Լեսմոնյա Եղիշեի Ղահրամանյանի հուղարկավորության ծախսերը մասնակի հատուցելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 88-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐՍԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի 20-80 տարեկան բնակիչների շրջանում անցկացվող նարդու 2025 թվականի համայնքային առաջնության կանոնակարգը ՝ առաջարկվում է

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ դրամական պարգևատրում տրամադրել Գավառ համայնքի 20-80 տարեկան բնակիչների շրջանում անցկացվող նարդու 2025 թվականի համայնքային առաջնությունում հաղթող ճանաչվող անձանց, որը տեղի կունենա մարտի 20-ից ապրիլի 10-ը բնակավայրերում, իսկ ապրիլի 11-ից ապրիլի 30-ը:
2. Դրամական պարգևները հաղթող ճանաչվող անձանց տրամադրել Գավառ համայնքի ղեկավարի Կարգադրությամբ՝ համապատասխանաբար առաջին տեղ՝ 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 75 000 /յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 89-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԻՍՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Զեկ. ՀԱԿՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ)

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը, «Գավառ համայնքի ավագանու գործունեության կանոնակարգը» և հաշվի առնելով Գավառ համայնքի ղեկավարի ներկայացրած գրությունը, ինչպես նաև համայնքային զարգացման ծրագրերին աջակցելու կարևորությունը՝ առաջարկվում է.

1. Համաձայնություն տալ «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպության կողմից Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցությանը ներկայացվող ծրագրին՝ համայնքի զարգացմանն ուղղված նպատակների իրագործման համար:
2. Ծրագրի հաստատման պարագայում ապահովել համայնքի կողմից նախատեսված 20% համաֆինանսավորումը, որը կազմում է 876,000 (ութ հարյուր յոթանասունվեց

հազար) ՀՀ դրամ:
3. Ուժի մեջ մտնել որոշումը՝ ընդունման պահից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 90-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԺԱՄԿԵՏՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, նկատի ունենալով, որ 2025 թվականի հունվարի 01-ին լրացել է Գավառ համայնքի և «Գավառի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջև 2021 թվականի հոկտեմբերի 04-ին կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը՝ առաջարկվում է.

1. Լուծել Գավառ համայնքի և «Գավառի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջև 04.10.2021 թ. կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը:
2. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Բուռնազյան փողոց 27 հասցեում (Հացառատ թաղամաս) գտնվող մանկապարտեզի շենքն ու հողամասը անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Գավառի թիվ 7 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նախադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու նպատակով:
3. Ուժը կորցրած ճանաչել «Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 10-ի թիվ 18-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 91-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԺԱՄԿԵՏՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, նկատի ունենալով, որ 2025 թվականի հունվարի 01-ին լրացել է Գավառ համայնքի և «Գավառի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջև 2023 թվականի փետրվարի 17-ին կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետը՝ առաջարկվում է.

1. Լուծել Գավառ համայնքի և «Գավառի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջև 17.02.2023 թ. կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը:
2. Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող Գավառ քաղաքի Սայադյան փողոց 95 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի կենտրոնական մուտքից ձախ մասնաշենքի առաջին հարկը, պահեստն ու ջրավազանը՝ ընդամենը 849,8 /ութ հարյուր քառասունինն ամբողջ ութ տասնորդական/ քմ մակերեսով տարածքն ու հողատարածքի համապատասխան բաժնեմասն անհատույց օգտագործման իրավունքով, 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օգտագործման ժամկետով տրամադրել «Գավառի թիվ 3 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նախադպրոցական կրթության ծառայության մատուցում իրականացնելու նպատակով:
3. Ուժը կորցրած ճանաչել «Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի գործողության ժամկետները երկարաձգելու մասին» Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 10-ի թիվ 18-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 92-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածով՝ առաջարկվում է.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մայիսի 08-ը ժամը 14^{00}-ն:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 93-Ա)*

Ավագանու անդամներ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՀՐԱՅՐ ԳՈՒԼԱԲՅԱՆ

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԳՆԵԼ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՏԱԿ ՁԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ՕՆԻԿ ԴԱՆՈՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ՆՈՒՆԵ ՄԻՐԻԲՅԱՆ

ԱՆԻ ՊԵՏՈՅԱՆ

ԼԱՎՐԻԿ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՐԻԲՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱԴԱԼՅԱՆ

ԶԱՐՈՒՀԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՆԴԱՆՅԱՆ

ՎԱԼՏԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Կարինե Մանուկյանը

_____